ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԹՈՒՐ ՄԱՅՍՈՒՐՅԱՆԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

   Արթուր Մայսուրյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ էկոնոմիկայի նախարարության ԵՄ հետ տնտեսական համագործակցության վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Նյու Յորք), 2022թ. ապրիլի 3-8-ը

4. **Հրավիրող կողմը.**

   ՄԱԿ-ի Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողով (UNCITRAL)

5. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն ՄԱԿ-ի միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (UNCITRAL) չորրորդ աշխատանքային խմբի (WG IV– Electronic Commerce) 63-րդ նստաշրջանին:

6. **Քննարկված թեմաները.**

   Միջոցառման ընթացքում քննարկվել են էլեկտրոնային առևտրի ոլորտի զարգացմանն առնչվող հարցեր, որոնք անմիջականորեն առնչվում են էլեկտրոնային առևտրի ապահովման նպատակով նորմատիվաիրավական կարգավորումների մշակմանը, էլեկտրոնային առևտրի զարգացման նպատակով արհեստական բանականության և ավտոմատացման համակարգերի ներդրման հնարավորություններին, համապատասխան տեխնիկական գործիքների կիրառմանը, ինչպես նաև այլ խնդիրներին: Նստաշրջանի ընթացքում հանգամանորեն քննարկվել են օրակարգում ներառված հետևյալ հարցերը.

   - «Նույնականացման տվյալների կառավարման և հավաստագրման ծառայությունների օգտագործման և անդրսահմանային ճանաչման» տիպային օրենքի նախագիծը,

- Տիպային օրենքի նախագծի բացատրական նշումների նախագիծը,
- Արհեստական բանականության և ավտոմատացման համակարգերի կիրառումը պայմանագրերի կնքման ընթացքում,
- Տվյալների հետ գործարքների վերաբերյալ փաստաթուղթը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկվա հարցերը.

ՄԱԿ-ի միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի չորրորդ աշխատանքային խմբի 63-րդ նստաշրջանը կայանում էր հիբրիդային ձևաչափով: Երեսունից ավելի երկրների ներկայացուցիչներ ֆիզիկապես էին մասնակցում, մյուսները՝ առցանց ձևաչափով: Մասնակցում էին նաև մի քանի հասարակական կազմակերպությունների և միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Նստաշրջանի ընթացքում համապարփակ ձևով քննարկվել և ամփոփվել է «Նույնականացման տվյալների կառավարման և հավաստագրման ծառայությունների օգտագործման և անդրսահմանային ճանաչման» տիպային օրենքի նախագիծը: Այս տիպային օրենքի նախագիծը ներկայացվել և քննարկվել է նախորդ մի շարք նստաշրջանների ընթացքում: UNCITRAL-ի չորրորդ աշխատանքային խմբի նախորդ՝ 62-րդ նստաշրջանի ընթացքում (2021թ. 22-26 նոյեմբերի.) և ս.թ. մարտի 1-2-ին կայացած աշխատանքային խմբի ոչ պաշտոնական նստաշրջանի ընթացքում ամրագրվել էին տիպային օրենքի նախագծի (A/CN.9/1112) տեքստին և հոդվածներին առնչվող մի շարք հարցեր, որոնց վերաբերյալ նույնպես պետք էր ձևավորել վերջնական մոտեցում և անհրաժեշտ էր քննարկել և համաձայնեցնել նստաշրջանի ընթացքում: Մասնավորապես, քննարկումները և հարցերը վերաբերվում էին.

- Տիպային օրենքում սահմանվող «Էլեկտրոնային նույնականացում» կամ «Աուտենտիֆիկացում» տերմինների օգտագործմանն ու շրջանակներին,
- Անձի էլեկտրոնային նույնականացման նպատակով կիրառվող մեթոդների հուսալիությանը և դրանց վերաբերյալ տարբեր համապատասխան հոդվածներում անդրադարձին,
- Անդրսահմանային ճանաչման համար օգտագործվող հուսալիության համարժեք մակարդակների համադրելիությանը,
- Նույնականության կառավարման համար «ապահովության մակարդակներին» կամ «հուսալիության մակարդակներին» հղումներին:

Երկրների ներկայացուցիչների կողմից ներկայացվեցին դիրքորոշումներ Էլեկտրոնային նույնականացում» կամ «Աուտենտիֆիկացում» տերմինների օգտագործմանն հարցի վերաբերյալ: Հատկապես կարևորվեց 1-ին, 5-րդ, 6,-րդ, 9-րդ

և 25-րդ Հոդվածներում դրանց օգտագործման մոտեցմանը, դրանց առնչությունը նույնականացման հավաստմանը, էլեկտրոնային նույնականացումը որպես ամբողջական գործընթաց կամ գործընթացի մի մաս դիտարկելուն, գործընթացի քայլերին, ինչպես նաև երկրների կողմից դրանց օգտագործման տեղայնացմանը և հետագա հնարավոր վեճերի կարգավորմանը:

Հատկապես բուռն և երկարատև քննարկում ընթացավ անձի էլեկտրոնային նույնականացման նպատակով կիրառվող մեթոդների հուսալիություն վերաբերյալ տիպային օրենքի նախագծում օգտագործվող ձևակերպումներին: Կարևորվեց մեթոդի հուսալիության հստակ ամրագրումը նախագծի տեքստում, քանի որ դրա բացակայության պարագայում նույնականացումը հաջողությամբ չի իրականացվի, որն էլ կբերի իրավական խառնաշփոթի և հնարավոր հետագա վեճերի:

Համաձայնություն ձեռք բերվեց հուսալիության դրույթների ամրագրման մասով, այնուամենայնիվ, որոշակի տարակարծություններ մնացին 9-րդ և 10-րդ Հոդվածների կառուցվածքի մասով:

Քննարկումների ժամանակ հատկապես կարևորվեց հուսալիության համարժեք մակարդակների ապահովումը նմանատիպ նույնականացման ծառայությունների մատուցման ժամանակ, այդ թվում՝ միասնական ստանդարտների կիրառման անհրաժեշտությունը անդրսահմանային ճանաչման գործընթացներում, դրանց համար օգտագործվող հուսալիության մակարդակների համապատասխանությունը գործող միջազգային ստանդարտներին և կարգավորումներին և հնարավոր համադրելիությունը հեռանկարային տեխնոլոգիաների հետ: Այս տեսանկյունից որոշ խմբագրումներ արվեցին 22-րդ, 25-րդ և 26-րդ Հոդվածներում:

Ներկայացված դիրքորոշումների հիման վրա հստակեցումներ արվեցին նաև նույնականացման «ապահովության մակարդակներ» կամ «հուսալիության մակարդակներ» սահմանումների հղումներում:

Կայացած քննարկումների արդյունքում իրականացված խմբագրումները համադրվեցին և ներառվեցին նաև Տիպային օրենքի նախագծի բացատրական նշումների նախագծում:

Նստաշրջանի ընթացքում կայացած քննարկումների արդյունքում առաջարկվեց ձևավորված «Նույնականացման տվյալների կառավարման և հավաստագրման ծառայությունների օգտագործման և անդրսահմանային ճանաչման» տիպային օրենքի նախագիծը (A/CN.9/1112) ներկայացնել UNCITRAL-ի հանձնաժողովի հաստատմանը՝ 2022թ. հուլիսի 5-7-ը կազմակերպվելիք Թվային տնտեսության շաբաթի ընթացքում:

Նստաշրջանի ընթացքում կայացել է նաև ոչ պաշտոնական նիստ-հանդիպում ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի Տեխնոլոգիաների հարցերով բանագնացի գրասենյակի ներկայացուցչի հետ, որը ներկայացրել է իրենց գործունեությունը թվային տարածության կանոնակարգման, տնտեսության թվայնացման և այդ ոլորտում բաց և անվտանգ համագործակցության նպատակով թվային տիպային

պայմանագրի մշակման ուղղությամբ, ինչպես նաև թվային տեխնոլոգիական տրանսֆորմացիաների մի շարք ծրագրերի ուղղությամբ, որոնց համար նաև հիմք են հանդիսանում էլեկտրոնային առևտրում և էլեկտրոնային ստորագրություններում ներկայումս օգտագործվող ընդհանուր թվային ռեսուրսները:

UNCITRAL-ի IV-րդ աշխատանքային խմբի 63-րդ նստաշրջանի շրջանակներում մեկնարկեցին քննարկումները Արհեստական բանականության և ավտոմատացման համակարգերի կիրառումը պայմանագրերի կնքման ընթացքում հայեցակարգային փաստաթղթի շուրջ (A/CN.9/WG.IV/WP.173): Փաստաթուղթը մշակել և շրջանառել էր UNCITRAL-ի քարտուղարությունը:

Բանախոսների կողմից կարևորվեց Արհեստական բանականության և ավտոմատացման համակարգերի օգտագործումը և հետագա գործընթացների հետագծելիությունը UNCITRAL-ի իրավական լավագույն փորձի օգտագործմամբ՝ համապատասխան պայմանագրերի կնքման ուղղությամբ: Առանձնահատուկ կարևորվեց դրանց համապատասխանությունն արդեն իսկ գործող իրավական կարգավորումներին և ամրագրվեց մասնակիցների միասնականությունը նշված հարցում:

ՄԱԿ-ի միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի չորրորդ աշխատանքային խմբի 63-րդ նստաշրջանի ընթացքում իմ ելույթում ընդգծել եմ տնտեսության թվայնացման ոլորտում անհրաժեշտ նորմատիվաիրավական կարգավորումների մշակման, էլեկտրոնային առևտրի զարգացման նպատակով արհեստական բանականության և ավտոմատացման համակարգերի ներդրման կարևորությունը, ինչպես նաև ներկայացվել եմ համապատասխան մոտեցումները նշված հարցերին, արհեստական բանականության կիրառման հնարավորություններին և դրա հետ փոխկապակցված մարտահրավերներին, մասնավորապես նաև՝ էթիկական բնույթի հարցերին, որոնք կարող են առաջանալ նմանօրինակ տեխնոլոգիաների կիրառման արդյունքում: Հատկապես ընդգծվել է արհեստական բանականության կիրառման համար հստակ նորմատիվային հենքի մշակման անհրաժեշտությունը:

Կայացած քննարկումների արդյունքում ընդգծվել է UNCITRAL-ի հետևողական աշխատանքը փաստաթղթի մշակման ուղղությամբ, կարևորվել է Արհեստական բանականության և ավտոմատացման համակարգերի համադրումը, մեքենայական ուսուցման մեթոդների կիրառումը, գործընթացի թափանցիկության ապահովումը, առցանց հարթակի արդյունավետ ձևավորումը և միասնական ստանդարտների կիրառումը, համապատասխան ալգորիթմների կիրառումը, մեծածավալ տեղեկատվության մշակումը, ինչպես նաև մտավոր սեփականության պաշտպանությունը:

Առաջարկվեց նաև պատրաստվող փաստաթղթում ի թիվս վերոնշյալի՝ տարանջատել նաև ավտոնոմ և ավտոմատացված համակարգերի ներքո պայմանագրերը, գործընթացի համար կարևորել էլեկտրոնային առևտրի մասին

տիպային օրենքի դրույթները, ապահովել ոչ խտրական մոտեցումը, գործընթացում մարդու ներգրավվածության մակարդակի սահմանումը, հաշվետվողականության պահպանումը, համակարգչային ծրագրերի անխափան կիրառումը և այլն:

Քննարկումների արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց նշյալ բոլոր նկատառումները հնարավորինս ներառել նոր ձևավորվող փաստաթղթի մեջ և քննարկումները շարունակել աշխատանքային խմբի հաջորդ նստաշրջաններում:

Նստաշրջանի ընթացքում UNCITRAL-ի քարտուղարության կողմից մասնակիցներին տրամադրվել է նոր փաստաթղթի նախագիծ (A/CN.9/WG.IV/LXIII/CRP.2), որի շրջանակներում էլ ակնկալվում է հետագայում ձևավորել տիպային օրենքի նախագիծ: Խոսքը վերաբերում է տվյալների հետ գործողությունների հայեցակարգին: Փաստաթուղթը նույնպես հանգամանորեն քննարկվեց, մասնակիցների կողմից ներկայացվեցին դիրքորոշումներ: Մասնավորապես՝ կարևորվեց ապագա փաստաթղթի ծածկույթի իրավական շրջանակները, տվյալների հետ գործարքների ընթացքում կողմերի իրավունքներն ու պարտականությունները, տվյալների մշակման շրջանակներում մոտեցումները և այլն:

Հիմք ընունելով ներկայացված առաջարկությունները՝ աշխատանքային խմբի շրջանակներում համաձայնեցվեց ապագա փաստաթղթի ընդհանուր շրջանակները և պայմանավորվածություն ձեռք բերվեց շարունակել քննարկումներն աշխատանքային խմբի հետագա նստաշրջաններում:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Նստաշրջանի ընթացքում կայացած քննարկումների արդյունքում որոշվել է «Նույնականացման տվյալների կառավարման և հավաստագրման ծառայությունների օգտագործման և անդրսահմանային ճանաչման» տիպային օրենքի նախագիծը A/CN.9/1112) ներկայացնել UNCITRAL-ի հաստատմանը՝ 2022թ. հուլիսի 5-7-ը կազմակերպվելիք Թվային տնտեսության շաբաթի ընթացքում:

Քննարկումների արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց՝ «Արհեստական բանականության և ավտոմատացման համակարգերի կիրառումն առևտրային պայմանագրերի կնքման ընթացքում» և «Տվյալների հետ գործարքների վերաբերյալ» պատրաստվող փաստաթղթերի տիպային նախագծերը ներկայացնել UNCITRAL-ի երկրներին՝ աշխատանքային խմբի հետագա նիստերում քննարկելու նպատակով:

UNCITRAL-ի IV-րդ աշխատանքային խմբի 63-րդ նստաշրջանի արդյունքում փաստաթուղթ չի ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝

Կարևորել և ապահովել հայկական կողմի հետագա անմիջական և շարունակական մասնակցությունը UNCITRAL-ի IV-րդ աշխատանքային խմբի նստաշրջաններին և համապատասխան ոչ պաշտոնական հանդիպումներին:

«Արհեստական բանականության և ավտոմատացման համակարգերի կիրառումն առևտրային պայմանագրերի կնքման ընթացքում» և «Տվյալների հետ գործարքների վերաբերյալ» պատրաստվող UNCITRAL-ի փաստաթղթերի տիպային նախագծերը ներկայացնել << շահագրգիռ մարմինների քննարկմանը, ապահովել նկատառումների և առաջարկությունների ամփոփումը և միասնականացումը՝ համակարգելով UNCITRAL-ի IV-րդ աշխատանքային խմբի նստաշրջանների շրջանակներում նշյալ փաստաթղթերի տեքստերի քննարկման ժամանակ հայկական կողմի դիրքորոշումների ներկայացումն ու պաշտպանությունը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Ի. Ստեփանյան

13.04.2022թ